

## Տ. ՍԱՐԳԻՍ ՔԱՀԱՆԱ ՉՈՓՈՒՐՅԱՆ

(ավազանի անունը՝ Արարատ)

Ծնվել է 1973 թ. հոկտեմբերի 31-ին, Գուգարաց մարզի Օձուն գյուղում:

1990 թ. ավարտել է Մեծամորի թիվ 2 միջնակարգ ռուսական դպրոցը:

1991-96 թթ. ուսանել և ավարտել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցը:

1996-97 թթ. ավարտել է Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի Ձ լսարանը:

1996 թ. մայիսի 16-ին, Համբարձման տոնին, ձեռամբ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի, ձեռնադրվել է սարկավագ: Գրել է ավարտաճառ՝ «Սևանի մենաստանի հոգևոր-մշակութային գործունեության մեկ դարը (1836-1930 թթ.)» թեմայով:

1997 թ. օգոստոսից ծառայության է անցել Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդարանում որպես գործավար-քարտուղար, այնուհետև նույն թեմի Քրիստոնեական Դաստիարակության Դպրոցների Կենտրոնում՝ իբրև տնօրենի օգնական:

1998 թ. օգոստոսի 30-ին Մայր Տաճարում, ձեռամբ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա: